# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
Էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունիսի 2026 թվականի N 52-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասներորդ նստաշրջանի յոթերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |
| Արծրուն Հակոբյան | | | |
| Ջոն Կիրակոսյան | | | |
| Սյուզաննա Նազարյան | | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | | |
| Լևոն Պապյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ

24.06.2026թ. ք. Ստեփանավան

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Է. ՌԵՎԱԶՅԱՆ**

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Տ. ԽԱՌԱՏՅԱՆ**

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԵՍԻՆԻ ՓՈՂՈՑԻՑ ՍԿԻԶԲ ԱՌՆՈՂ ՓԱԿՈՒՂԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«24» հունիսի 2026 թվականի N 53-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | | |
| Վարսիկ Ասրյան | | | |
| Անուշ Բաղդասարյան | | | |
| Ատոմ Գագինյան | | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | | |
| Արմեն Դավթյան | | | |
| Արծրուն Հակոբյան | | | |
| Ջոն Կիրակոսյան | | | |
| Սյուզաննա Նազարյան | | | |
| Մարտուն Մարտիրոսյան | | | |
| Հմայակ Մարտիրոսյան | | | |
| Լևոն Պապյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029ԹԹ ՄԺԾԾ

Ստեփանավան համայնքի 2027-2029 թվականի ՄԺԾԾ-նկազմվել է՝ "հիմք ընդունելով համայնքի 2023-2027թվականների զարգացման ծրագրի գերակայությունները, ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները,որոնք արտացոլվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված համայնքների առաջիկա տարվա բյուջետային հայտերի կազմման պարտադիր և խորհրդատվական մեթոդական ցուցումներում և ուղեցույցներում, և որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրումները իրականացվում են յուրաքանչյուր մասի համար առանձին:

Համայնքի ՄԺԾԾ պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների վրա: Այն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

**1.Բյուջեի եկամուտների կանխատեսում**

Ստեփանավան համայնքի 2027 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1318413.1 հազար դրամ, գերազանցելով նախորդ տարվա հաստատված բյուջեն 20.8 %-ով, որը կազմել էր 1043963.3 հազար դրամ:

2027 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են՝ հիմքում ունենալով 2025 թվականի կատարողականը, 2026 թվականին համայնքում հարկերի հավաքագրման համար իրականացվող միջոցառումների հետևողականությունը և արդյունավետությունը: Հարկային եկամուտները ծրագրելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2026 թվականի հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը

պայմանավորված է գույքային հարկերի բազաների ճշտումների արդյունքով: Նախագծով նախատեսված եկամուտների հիմավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում:

Մասնավորապես.

1) Հարկեր և տուրքեր.

2027թ. ծրագրվել են 186700.0 հազար դրամի չափով կամ 2026 թվականի 186375.0 հազար դրամի դիմաց :

2026 թվականին անշարժ գույքից գույքային հարկերի հաշվարկային թիվը կազմել է 52767.3 հազ.դրամ, 2027 թվականի բյուջեում անշարժ գույքից գույքային հարկերի գծով նախատեսվել է 71000.0 հազ.դրամ դրամ՝ 18232.7 հազ.դրամով ավել 2026թ. հաշվարկային թվից:

- 2027 թվականի բյուջեում գույքահարկ փոխադրամիջոցներ գծով նախատեսվել է 97000.0 հազ.դրամ:
- Տեղական տուրքերը 2027թ.համար ծրագրվել են 12700.0 հազար դրամի չափով:
- Պետական տուրքերը ծրագրվել են նոտարական գրասենյակի կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 6000.0 հազար դրամ: Հաշվի են առնվել 2024-2025թթ. նոտարական գրասենյակի կողմից մատուցված ծառայությունների քանակը:

2.) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները ծրագրվել են 938063.1 հազար դրամ՝ իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) պլանավորվել են հիմք ընդունելով 2026 թվականին ներկայացված հայտերը:

3) Այլ եկամուտներ.

այլ եկամուտների հաշվարկային գումարը 2027 թվականի ծրագրով նախատեսվել են 193650.0 հազար դրամ՝ գերազանցելով 2026թ. ցուցանիշները 27154.3 հազ.դրամով: Այլ եկամուտները իրենց մեջ ներառում են հողի և գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական գանձումները (նախադպրոցական և արտադպրոցական

կազմակերպություններում համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարներ), տեղական վճարները (աղբահանություն), տույժերը, տուգանքները, օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող այլ վճարները, և այլ եկամուտներ:

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր, վարքագծի կանոնների փոփոխություն առ այն, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասվածից: Համանյքի ղեկավարի հետևողական, բացատրական և վարչարարական աշխատանքների արդյունքում փորձում ենք հասնել ռիսկերի նվազեցման և չեզոքացման:

**Ֆոնդային բյուջեի** եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումներից, պետական բյուջեից ստացված սուբվենցիաներից և անշարժ գույքի օտարումից մուտքերի հաշվին:

- 2027թ. նախատեսվել է հողի օտարում 300000.0 հազ.դրամ;
- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումը նախատեսվել է 254425.9 հազ.դրամ:

## 1.1. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

| Հ/Հ | Մուտքի անվանումը | 2025թ փաստ | 2026թ. Հաստ. | 2027 թ. կանխ. | 2028թ. կանխ. | 2029 թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4+5+6)** | **1143493,3** | **1189059,4** | **1318413.1** | **1318413.1** | **1318413.1** |
| 1 | Գույքային հարկեր Անշարժ գույքից | 58767.9 | 63332,9 | 71000,0 | 71000,0 | 71000,0 |
| 2 | Գույքային | 107027.3 | 110419,8 | 97000,0 | 97000,0 | 97000,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հարկեր այլ գույքից | | | | | |
| 3 | Տուրքեր | 20482.4 | 12350,0 | 12700,0 | 12700,0 | 12700,0 |
| 4 | Պաշտոնական դրամաշնորհներ | **732010,9** | **808736,1** | **938063.1** | **938063.1** | **938063.1** |
| 5 | Այլ եկամուտներ | 195262,5 | 160534,8 | 193650,0 | 193650,0 | 193650,0 |
| 6 | Հողի և գույքի վարձակալություններ | **29942.3** | **33685,8** | **68600,0** | **68600,0** | **68600,0** |
| | Այդ թվում՝ | | | | | |
| | | **2025թ.փաստ** | **2026թ. հաստ** | **2027թ. կանխ.** | **2028թ. կանխ.** | **2029թ. կանխ.** |
| | Վարչական բյուջեի սեփական եկամուտներ | 411482,4 | 380323,3 | 380350.0 | 380350.0 | 380350.0 |
| | Եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը % | 36,0 | 32,0 | 28.9 | 28.9 | 28.9 |

## 2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի համաձայն՝ նախատեսվում է 2026թ. աշնանը իրականացնել համայնքների միավորման գործընթաց, որով նախատեսվում է ձևավորվել՝ ***ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնք,*** որում ներառվել են ներկայիս Ստեփանավան, Գյուլագարակ և Լոռի Բերդ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված թվով 20 բնակավայրերով:

Ելնելով վերոնշվածից ՝2027-2029թվականների համար կանխատեսել իրատեսական ծախսեր և եկամուտներինարավոր չէ, այդ իսկ պատճառով միջնաժամկետ ծախսերի ծրագիրըկազմվել է միայն 2027թ. համար:

Ստեփանավան համայնքի 2027 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրով ծախսերը նախատեսվել է 2305438.9 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 57.2 %-ը կամ 1318413.1 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 1241451.7 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 300000.0 հազար դրամ: Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում 28.2 %-ը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, 2.7 %-ը՝ «Տնտեսական հարաբերություններ» ոլորտին, 9.1 %-ը՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտին, 5 %-ը՝ «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ոլորտին, 7 %-ը՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին, 27.1 %-ը՝ «Կրթություն» ոլորտին, 0.46 %-ը՝ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտին, 20.4 %-ը՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր» ոլորտին: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 20.4 %-ի չափով՝ ապահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները:

Ստորև ներկայացվում են համայնքի 2027 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրի:

1) «Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում» ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրական պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: 2027թ. պահպանման ծախսերը պլանավորվել են291655.0 հազ.դրամ՝ հիմք ընդունելով խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Ծախսերը պլանավորվել են՝ հաշվի առնելով վերջին երեք տարիների փաստացի ցուցանիշները:

Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների պահպանման համար նախատեսվել է 676473.9 հազ.դրամ՝ նախորդ 655648.0հազ.դրամի դիմաց:

*Համայնքի վարչական բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման*

| Հ/Հ | Ծախսի անվանումը | 2025թ .փաստ | 2026թ. հաստ | 2027թ. կանխ. | 2028թ. կանխ. | 2029թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը ծախսեր** | **969818.2** | **1164873.6** | 1318413.1 | 1318413.1 | 1318413.1 |
| 1 | | 262656.6 | 359696.9 | 371724,7 | 371724,7 | 371724,7 |
| | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ տնտեսական հարաբերություններ | 32518.1 | 34685.9 | 36153,0 | 36153,0 | 36153,0 |
| 2 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 99124.9 | 120068.7 | 119955,7 | 119955,7 | 119955,7 |
| 3 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 60571.4 | 65462.3 | 65994,0 | 65994,0 | 65994,0 |
| 4 | Հանգիստ մշակույթ և կրոն | 67264.1 | 88263.9 | 92463,9 | 92463,9 | 92463,9 |
| 5 | Կրթություն | 298998.1 | 357195.9 | 357195,9 | 357195,9 | 357195,9 |
| 6 | Սոցիալական պաշտպանությո | 1685.0 | 5000.0 | 6000.0 | 6000.0 | 6000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ն | | | | | |
| 7 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 147000.0 | 134500.0 | 268925,9 | 268925,9 | 268925,9 |

*Համայնքի վարչական բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման*

| Հ/ հ | Ծախսի անավանումը | 2025թ. փաստ ացի | 2026թ. հաստա տված | 2027թ. կանխ. | 2028թ. կանխ. | 2029թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | **969818.2** | **1164873.6** | **1318413.1** | **1318413.1** | **1318413.1** |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 173041.3 | 244944,5 | 243990,0 | 243990,0 | 243990,0 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 77888.4 | 95705,2 | 107873,3 | 107873,3 | 107873,3 |
| 3 | Դրամաշնորհներ | 562600.2 | 676473,9 | 676473,9 | 676473,9 | 676473,9 |
| 4 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 4244.7 | 8000.0 | 12500,0 | 12500,0 | 12500,0 |
| 5 | Այլ ծախսեր | 152043.6 | 139750,0 | 277575,9 | 277575,9 | 277575,9 |

Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման համար համայնքում ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները, սուբվենցիոն ծրագրերով՝

**2025թ. սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են**

1. **Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ**

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Հ. Մեղապարտ,Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր բյուջեն 388616.1 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 213738.9հազ. դրամ

- Հ. Մեղապարտի, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցները գլխավոր են,ներհամայնքային, ծրագրի շահառուները համայնքի բնակիչներն են, ինչպես նաև զբոսաշրջիկներ և հյուրերն են ովքեր երթևեկում են այս փողոցով:

Ծրագրի իրականացումն ունի քաղաքաշինական, քաղաքային տնտեսության ենթակառուցվածքների բարելավման և բարեկարգման անհրաժեշտություն,որը կնպաստի համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժին:

**Աշխատանքները շարունակական են և կավարտվեն 2026թ.**

2. **ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանը 2025թ. մասնակցեց մասնակցային բյուջետավորման գործընթացին և առավելագույն ձայներ հավաքեց**

«Ստեփանավան քաղաքի գերեզմանոցների պարսպապատում և հարակից տարածքների բարեկարգում» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 37467.8 հազ.դրամ էր, համայնքի կողմից ներդրվել է7570.1 հազ.դրամ:

2026թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով մասնակցային բյուջետավորման գործընթացին մասնակցելու համար նախատեսվել է 20000.0հազ.դրամ, 2027թ. ՝ 30000.0հազ.դրամ:

**2026թ. կսկսվի Ստեփանավան քաղաքում գյուղատնտեսական շուկայի շինարարությունը:**

**2026թ.սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են**

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մայակովսկի փողոցի, Մայակովսկի 1-ին և 2-րդ փակուղիների, Կոմիտաս փողոցի, Մյասնիկյան փողոցի 1-ին և 2-րդ փակուղիների հիմնանորոգում տուֆե սալարկումով: Ծրագրի ընդհանուր բյուջեն 1134452.5 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 453781.0 հազ. դրամ:

   Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կավելանա մոտ 1,143 մլրդ.դրամով: Փողոցները պատկանում են համայնքին: Աշխատանքները շարունակական են և կավարտվեն 2027թ.:

2. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1, 3, 4 մանկապարտեզների բակերի, քաղաքի և վարչական տարածքների պուրակների բարեկարգում և հիմնանորոգում : Ծրագրի ընդհանուր բյուջեն 728560.0 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 473564.0 հազ. դրամ:

**Աշխատանքները շարունակական են և կավարտվեն 2027թ.:**

Ծրագիրը համահունչ է համայնքի հնգամյա 2023-2027թթ. զարգացման ծրագրին, որտեղ որպես գերակա խնդիր է նշվել բնակավայրերում ենթակառուցվածքների կառուցումն ու պահպանումը՝ իր առջև դնելով բնակավայրերում բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակ, ինչին էլ ուղղված է ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը: Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում

- Կունենանք բազմաբնակարան շենքերի բարեկարգ և կահավորված բակային տարածքներ՝ նախատեսված ժամանցի համար
- Բազմաբնակարան շենքերի և հարակից տարածքների երեխաների համար հարմարավետ արդիական խաղահրապարակներ
- Պուրակների հիմնանորոգումից հետո կունենանք մաքուր և կանաչապատ տարածքներ, որոնք կստեղծեն ավելի մաքուր և հարմարավետ միջավայր, որը թույլ կտա զբոսաշրջիկներին կազմակերպել իրենց հանգիստը
- Վարչական բնակավայրի բնակիչներին ևս կընձեռնվի հնարավորություն կազմակերպելու իրենց հանգիստը և ժամանցը:

3. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Չայկովսկի փողոցի և Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում:Ծրագրի ընդհանուր բյուջեն 224552.3 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 50524.3 հազ. դրամ և այլ ներդրողի կողմիցներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 72979.5 հազ. դրամ: Աշխատանքները շարունակական են և կավարտվեն 2027թ.:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«24» հունիսի 2026 թվականի N 54-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 23 նոյեմբերի 2025 թվականի թիվ 150-Ն որոշումը և ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Արմեն Գրիգորյան | | |
| Վարսիկ Ասրյան | | |
| Անուշ Բաղդասարյան | | |
| Ատոմ Գագինյան | | |
| Արմեն Փ. Գրիգորյան | | |
| Արմեն Դավթյան | | |
| Արծրուն Հակոբյան | | |
| Ջոն Կիրակոսյան | | |
| Սյուզաննա Նազարյան | | |

Մարտուն Մարտիրոսյան

Հմայակ Մարտիրոսյան

Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Ստեփանավան համայնքի ավագանու 2026 թվականի
12 հունիսի N 54-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2026 ԹՎԱԿԱՆԻ
# Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ա Յ Ի Ն
# Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Ստեփանավան 2026 թ.

## *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ........ 3

**1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ** ........ 4

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 4

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ- ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ........ 8

1.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ........ 12

1.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ........ 16

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺ........ 16

**2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**...18

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ........ 18

2.2. ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ........ 21

2.3. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ........ 25

3. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ ........ 26

**3.1. Ենթածրագիր N 1** ........ 26

**4.1 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ՝ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1** ........ 28

**5. 1 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԸ՝ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1** ........ 29

**3.2. Ենթածրագիր N 2**........ 30

**4.2 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ՝ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2**........ 34

**5.2 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ՝ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2** ........ 37

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ համայնքի բնակիչներ,

Համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության, կյանքի որակի բարելավման, խոցելի խմբերի սոցիալական աջակցության ապահովման նպատակով մշակվել է Ստեփանավան համայնքի 2026 թվականի սոցիալական ծրագիրը՝ հաշվի առնելով համայնքի բնակիչների գնահատված սոցիալական կարիքները և առկա ռեսուրսները:

Գնահատման գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են համայնքի տարբեր թիրախային խմբերի սոցիալական խնդիրներն ու կարիքները, համայնքի ներուժն ու հնարավորությունները:

Ստեփանավան համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 9-ի թիվ 236 որոշմամբ համայնքային սոցիալական ծրագրի մշակման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվել են տվյալների հավաքագրում, համայնքի առաջնահերթ սոցիալական խնդիրների բացահայտում, դրանց վերլուծություն և համապատասխան միջոցառումների պլանավորում:

Համայնքի սոցիալական ծրագիրը նախատեսված է 2026 թվականի համար: Ծրագրի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել

սոցիալապես անապահով ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, երիտասարդների, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող այլ խմբերի հիմնախնդիրների լուծմանը:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

## 1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լոռվա կանաչ բարձրավանդակում՝ Ձորագետի նշանակալի կիրճի կողքին է գտնվում Ստեփանավան կոչվող գողտրիկ քաղաքը, որը հաճախ անվանում են Լոռվա մարգարիտ:

Դեռևս մ.թ.ա. II-I դարերում Ստեփանավանն իր շրջակայքով կազմել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մի մասը և մտել է Արտաշեսյան թագավորության մեջ: Մ.թ.ա III-II-րդ հազարամյակներում ներկայիս Ստեփանավանից 1 կմ հեռավորության վրա՝ արևմտյան մասում են պահպանվել անմշակ ժայռաբեկորներով կառուցված միաշար պարիսպներով ամրոցի առանձին հատվածներ:Քաղաքի շրջակայքում պահպանվել են նաև մ.թ.ա. XIII-IX դարերում ձևավորված դամբարանադաշտեր:

Մ.թ. 1-ից 4-րդ դարերում Ստեփանավանը եղել է Արշակունյաց թագավորության կազմում: 385 թ.-ին Մեծ Հայքի բաժանումից հետո Տաշիր գավառի մեջ մնացել է հայկական մարզպանության կազմում: Քաղաքի հնադարյան պատմության վկայություններից մեկը հարավ-արևմտյան մասում գտնվող V-VI դ.դ. «Չեչմանիս» եկեղեցու պահպանված խորանի հատվածի երկու առանձին մասերն են և եկեղեցու հյուսիսային պատի մոտ, ներքուստ, դրված երկատված խաչքարը:

Որպես բնակատեղի, Ստեփանավանը սկիզբ է առել V դարից, ինչը հիմնավորում է V-XII դարերում քաղաքի հուսիս-արևմտայն մասում, Ձորագետի կիրճում, գետի ձախափնյա ձորալանջին կառուցված և ներկայումս պահպանված «Աչաջուր» գյուղատեղի կիսավեր եկեղեցին՝ շուրջը կանոնավոր քարերով շարված մի քանի շինությունների փլատակներով:

10-րդ դարում Ստեփանավանը եղել է պատմական Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների) թագավորության մայրաքաղաքը: Դավիթ Անհողին թագավորի (989-1048 թթ.) օրոք Կյուրիկյանների թագավորությունը հզորացել և ընդլայնել է թագավորության տարածքները, իսկ Ստեփանավանի տարածքը «Լոռե» անվանումով կազմել է թագավորության կալվածքի մի մասը: 1118-1122 թթ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը մաքրել է Լոռին թուրք սելջուկներից և այն միացրել Վրաստանին: 1185 թ.-ից սկսած Ստեփանավանն իր շրջակա տարածքներով Լոռու կազմում տրվել է Զաքարյաններին:

Քաղաքի բազմադարյան պատմության մեկ այլ վկայությունը՝ քաղաքի արևմտյան մասում, Ձորագետ և Օրան-Լոռե գետերի միախառնման տեղում, բարձր հրվանդանի վրա XII-XVII դարերում կառուցված «Օրան-Լոռե» գյուղատեղին է, որտեղ ներկայումս պահպանվել են ուղղանկյուն հատակագծով բնակելի շինությունների հիմնապատերը:«Օրան-Լոռե»-ի սահմանից ներքև՝ Տաշիր գետի կիրճում է գտնվում միջնադարյան գյուղատեղի, որը տարածված է կիրճի թեք լանջով,տարածքում կան ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներ:

17-րդ դարի սկզբին Ստեփանավանի տարածք են գաղթել Շահ Աբասի հալածանքներից փախած հայեր և հիմնել են Չեչմանիս բնակատեղին:

1801 թվականին Լոռու կազմում Ստեփանավանի տարածքը միացվել է Ռուսաստանին: Այդ տարիներին Ցարական Ռուսաստանի Եկատերինա կայսրուհու գահակալության ժամանակներից սկսած այս տարածքներ են աքսորվել մեծ թվով սպաներ, նաև կուսանոցների կույսեր, ովքեր ընտանիք կազմելով 1804 թվականին հիմնել են Սլաբոդկա անունով նոր թաղամասը, որի կառուցապատումն իրականացվել է շինարարական որոշակի սկզբունքներով: Այս պատճառով հետագայում գյուղը հաճախ են կոչել գյուղաքաղաք, քաղաք: Ներկայումս դրանք Կոմիտաս, Մայակովսկի, Անդրանիկ փողոցներն են, ուր մինչև հիմա էլ կան ռուսական տնաշինական ոճով կառուցված տներ: Մայակովսկի փողոցի տներից մեկում էլ բնակվել է ռուս մեծ բանաստեղծ Մայակովսկու մայրը՝ Ալեքսանդրա Պավլենկոն իր ծնողների հետ:

1810 թ. տարածքը հանդես է եկել որպես քաղաք և կրել է Ջալալօղլի (Ջալալի որդի՝ իրանալեզու ծագումնաբանությամբ) անվանումը՝ ի պատիվ Արցախի իշխանական տոհմի՝ Հասան-Ջալալյանների: Այս մասին է վկայում Ստեփանավանի քաղաքային գերեզմանատանը պահպանված հուշաքարը հետևյալ հայատառ մակագրությամբ՝ «Ավանս հիմնեց որդին իշխան Դավիթ Հասան-Ջալալյանց՝1810»:

1826 թվականի ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ստեփանավանում տեղակայված ռուսական կայազորը, որը գլխավորել է ռուս անվանի զորավար, 1812 թվականի Հայրենական պատերազմի հերոս, գեներալ-լեյտենանտ Դենիս Դավիդովը:

1829 թվականին Ստեփանավանի կիրճում ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը հանդիպել է ռուս բանաստեղծ և դիվանագետ Ալեքսանդր Գրիբոեդովի դին Թեհրանից Թիֆլիս տեղափոխախող մարդկանց:
1842 թվականի աշխարհագիր մատյաններում գյուղաքաղաքը, ինչպես նաև Ստեփանավանի կիրճով անցնող Ձորագետը նշվում է Կամենկա անվանումներով:
Ստեփանավանում գործել է չորսամյա երկսեռ դպրոց, որտեղ 1879-1883 թթ. կրթությունն է ստացել մեծ գրող Հովհաննես Թումանյանը: 19-րդ դարի վերջին այս դպրոցում է դասավանդել ազգային- ազատագրական շարժման հայտնի գործիչ Հովսեփ Արղությանը:
1918 թվականի մայիսի 19-ից 21-ը Ստեփանավանում է գտնվել հայկական բանակային կորպուսի դիվիզիան՝ գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ, որն այդ օրերին քաղաքի մատույցներում կատաղի մարտեր է վարել թուրքական զորքի դեմ: Նույն թվականին, երբ Հայաստանի և Վրաստանի միջև տեղի է ունեցել զինված բախում, ստեղծվել է Լոռու “Չեզոք գոտին”, որտեղ ընդգրկվել է նաև Ստեփանավանի տարածաշրջանը: Այս ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական պայքարն է նկարագրել գրող Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» «Բերդ» գլխում:
1921 թ. փետրվարի 11-ին Լոռու "Չեզոք գոտին" վերացվել է, և Ստեփանավանը՝ շրջակա գյուղերով միացվել է Լոռի-Փամբակի գավառին, որը Խորհրդային Հայաստանի 9 գավառներից մեկն էր:
1923 թ. ի պատիվ 20-րդ դարի ականավոր քաղաքական գործիչ Ստեփան Շահումյանի, որը 1899 թվականին Ստեփանավանում հիմնել է Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը, քաղաքը վերանվանվել է Ստեփանավան: Ստեփանավան քաղաքը զգալի տուժել է 1988-ի Սպիտակի երկրաշարժից: Երկրաշարժից հետո քաղաքը վերակառուցվել է և տարածվել նաև Ձորագետի ձախ ափին:
2018 թ. համայնքների խոշորացման արդյունքում Ստեփանավան քաղաքին են միացել Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր վարչական բնակավայրերը:
Ստեփանավան խոշորացված համայնքն օր օրի գեղեցկանում ու զարգանում է և իր գունագեղ առանձնահատկություններով գրավում է աշխարհի տարբեր մասերից մեր երկիր ժամանող զբոսաշրջիկների և հյուրերի:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմումէ 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտո մայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ - տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսումեն 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր: Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ և այն պատկանում է ԱԻՆ նախարարությանը: Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում:

ԱՐՄԱՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Արմանիս բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքից մոտ 5.4 կմ դեպի արևմուտք: Հիմնադրվել է Ալաշկերտից գաղթած հայերի կողմից 1870 թվականին: Արմանիս բնակավայրը ունի Լեռնային բարեխառն մայրցամաքային կլիմա՝ ցրտաշունչ, ձյունառատ, բայց համեմատաբար մեղմ ձմեռներով և զով ամառներով: Հունվարի միջին ջերմաստիճանը -5$^0$C է: Հուլիսի ջերմանստիճանը +16$^0$C, տեղումների միջին քանակը 700մմ:

ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Ուրասար բնակավայրը մտնում է ՀՀ Լոռու մարզի, Ստեփանավան համայնքի կազմի մեջ:: Բարձրությունը ծովի մակերևույթից 1525մ է: Հեռավորությունը մարզկենտրոնից 33կմ հյուսիս-արևմուտք, իսկ Ստեփանավան քաղաքից 10կմ դեպի արևմուտք: Ուրասար բնակավայրը նախկինում անվանել են Նովո-Պոկրովկա, իսկ խորհրդային տարիներին՝Կույբիշևո, որը հիմնադրվել է 1855 թվականի հոկտեմբերի 14-ին: 1994թ. ապրիլ

ամսից գյուղը վերանվանվել է Բազումի լեռնաշղթայի ամենաբարձր սարի անունով, որի բարձրությունը հասնում է 2950մ և կոչվում է Ուրասար՝, գագաթին ծվարում են ուրուրները: Ուրասար բնակավայրի կլիման ծմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 700(մմ) է: Օդի միջին ջերմաստիճանը հունվար ամսին -5(°C) է, իսկ հուլիս ամսին՝ 14(°C):

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Կաթնաղբյուր բնակավայրը գտնվում է ՀՀ հյուսիսային մասում, Բազումի լեռների հյուսիսային լանջերին, գյուղը բարձրադիր լեռնային է, գտնվում է ծովի մակերևույթից 1650 մ. բարձրության վրա: Գյուղի տարածքով է հոսում Ձորագետ գետը: Գյուղամերձ սոճու անտառները, հանքային ջրերի աղբյուրները և մաքուր օդը յուրօրինակ կոլորիտ են հաղորդում զբոսաշրջիկներին:Գյուղը հիմնվել է 1830-ական թվականներին: Արևմտյան Հայաստանի Գյուլիերան գյուղի գաղթականների կողմից: Մինչև այդ հանդիսացել է հեռագնա արոտավայր:

Կաթնաղբյուր բնակավայրի կլիման ծմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 700 (մմ) է: Օդի միջին ջերմաստիճանը հունվար ամսին -5 (0C) է, իսկ հուլիս ամսին՝ 14 (0C):

## 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ- ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

| **Տվյալը** | | **Ժամանակահատվածը՝ 2026 թ. (լրացվում են առկա վերջին տվյալները)** | | |
|---|---|---|---|---|
| | | 2026 | | |
| 1 | Մշտական բնակչության թիվը, որից՝ | 18792 | | |
| 1.1 | Արական | 9104 | | |
| 1.2 | Իգական | 9868 | | |
| 1.3 | մինչև 18 տարեկան, որից՝ | 3348 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.3.1 | Արական | 1743 | | |
| 1.3.2 | Իգական | 1605 | | |
| 1.4. | 65-75 տարեկաններ, որից՝ | 2415 | | |
| 1.4.1 | Արական | 993 | | |
| 1.4.2 | Իգական | 1422 | | |
| 1.5 | 75-ից բարձր, որից՝ | 1087 | | |
| 1.5.1 | Արական | 358 | | |
| 1.5.2. | Իգական | 729 | | |

| Տվյալը | | **Ժամանակահատվածը՝2026թ (լրացվում են առկա վերջին տվյալները)** | | |
|---|---|---|---|---|
| | | 2026 | | |
| 2. | Տնային տնտեսությունների թիվը | 3909 | | |
| 2.1. | Մշտական տնային տնտեսությունների թիվը, որոնք մի տարուց ավել մշտապես բնակվում են համայնքում | 3519 | | |
| 2.2. | Փաստացի բնակվող տնային տնտեսությունների թիվը | 3470 | | |
| 3. | Աշխատունակ տարիքի անձանց թիվը, որից՝ | | | |
| 3.1. | Կանայք | | | |
| 3.2. | Տղամարդիկ | | | |
| 4. | Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝ | 550 | | |
| 4.1. | Կանայք | 382 | | |
| 4.2. | Տղամարդիկ | 168 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Գործազուրկ անձանց թիվը, որից՝ | 529 | | |
| 5.1 | Կանայք | 370 | | |
| 5.2 | Տղամարդիկ | 159 | | |
| 6. | Ժամանակավոր աշխատանքի մեկնած (մեկնող) անձանց թիվը, որից՝ | | | |
| 6.1. | Կանայք | | | |
| 6.2. | Տղամարդիկ | | | |
| 7. | Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը, որից՝ | 1237 | | |
| 7.1. | Կանայք | 618 | | |
| 7.2. | Տղամարդիկ | 619 | | |
| 7.3. | Հաշմանդամության 1-ին խումբ կամ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակում ունեցող անձանց թիվը | 43 | | |
| 7.4. | Հաշմանդամության 2-րդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում անձանց թիվը | 372 | | |
| 7.5. | Հաշմանդամության 3-րդ խումբ կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում անձանց թիվը | 759 | | |
| 8. | Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը | 63 | | |
| 9. | Հաշմանդամություն չունեցող, սակայն հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը, որից՝ | | | |
| 9.1. | Մինչև 18 տարեկան | | | |
| 9.2. | 18 տարեկանից բարձր | | | |
| 10. | Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքերի թիվը | | | |
| 11. | Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում | 911 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներառված ընտանիքների թիվը, որից՝ | | | |
| 11.1. | Ծայրահեղ անապահով կամ անապահովության նպաստ ստացող ընտանիքների թիվը | | | |
| 11.2. | Չափավոր անապահով ընտանիքների թիվը | | | |
| 11.3. | Միջին անապահով ընտանիքների թիվը | | | |
| 11.4. | Անապահով ընտանիքների թիվը | | | |
| 12. | Ընտանիքների թիվը՝ համաձայն Կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված խնամառության խմբերի | | | |
| 13. | Բազմազավակ ընտանիքների թիվը (3 և ավելի երեխա ունեցող) | 130 | | |
| 14. | Բնակիչների մեծամասնությունից սոցիալապես մեկուսացած ընտանիքների թիվը | | | |
| 15. | Անօթևանների կամ որոշակի բնակության վայր չունեցողների թիվը | | | |
| 16. | Միայնակ չաշխատող կենսաթոշակառուների թիվը | 84 | | |
| 17. | Միածնող ընտանիքների թիվը | | | |
| 18. | Բռնի տեղահանվածների թիվը, որից՝ | | | |
| 18.1. | Անձ | 356 | | |
| 18.2. | Ընտանիք | 102 | | |
| 19. | Փախստականների թիվը, որից՝ | | | |
| 19.1. | Անձ | 78 | | |
| 19.2. | Ընտանիք | 17 | | |
| 20. | Ապաստան հայցողների թիվը, որից՝ | 0 | | |
| 20.1. | Անձ | 0 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20.2. | Ընտանիք | 0 | | |
| 21. | Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը | 2 | | |
| 22. | Առանց ծնողական խնամքի մնացած և համայնքում գտնվող երեխաների թիվը, որից՝ | 2 | | |
| 22.1. | Խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող երեխաների թիվը | 2 | | |
| 22.2. | Խնամատարության հանձնված երեխաների թիվը | 1 | | |
| 23. | Վերջին մեկ տարում հարկադիր վերադարձած միգրանտ ունեցող ընտանիքների թիվը | - | | |
| 24. | Վերջին մեկ տարում երկարաժամկետ միգրանտ ունեցող ընտանիքների թիվը | - | | |
| 25. | Վերջին մեկ տարում ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած անձանց թիվը, որից՝ | - | | |
| 25.1. | Կանայք | | | |
| 25.2 | Տղամարդիկ | | | |
| 26. | Նախորդ վեց ամիսների ընթացքում հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ դրության կամ ռազմական դրության) տուժած անձանց կամ ընտանիքների թիվը | - | | |

## 1.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| **Տրանսպորտային հաղորդակցության նկարագիրը (առկայությունը, մեկնման կամ ժամանման հաճախականությունը)** | |
|---|---|
| Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ | Մարզկենտրոնի հետ կապը ապահովվում է անհատական |

| | |
|---|---|
| (Երևանի և մարզկենտրոնների դեպքում լրացման ենթակա չէ) | տաքսի ծառայությունների միջոցով |
| Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ (Երևանի դեպքում լրացման ենթակա չէ) | Մայրաքաղաքի հետ կապը ապահովվում է անհատական տաքսի ծառայությունների միջոցով |
| Ներհամայնքային տրանսպորտը (բոլոր բնակավայրերում առկա) | Գործում է ներհամայնքային տրանսպորտի 1 երթուղայինգիծ( Կաթնաղբյուր բնակավայրից դեպի ք. Ստեփանավան՝ օրական մեկ անգամ) և անհատական տաքսի ծառայություն |
| Տրանսպորտային կապը հարևան համայնքների հետ | Հարևան համայնքներ հետ կապը ապահովվում է անհատական տաքսի ծառայությունների միջոցով |

| **Համայնքի՝ սոցիալական պատասխանատվության ուղղությամբ տնտեսական ներուժի նկարագիրը** | |
|---|---|
| Միջին և խոշոր ընկերությունները, որոնք ունեն ներուժ սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու համար | Առկա չեն |
| Սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնող ընկերությունները. Վերջին երեք տարում սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու փորձառությամբ ընկերությունները | «Լիարժեքկյանք» ՀԿ, ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղ, **AMAA** /Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն/ |
| Համայնքի հաշվեկշռում առկա չօգտագործվող, սակայն սոցիալական ծրագրերի նպատակով օգտագործման ենթակա շինությունները | Առկա չեն |

| **Առողջապահական և կրթական կազմակերպությունները** | **Անվանումը** |
| --- | --- |
| Մանկապարտեզները կամ նախադպրոցական ուսումնական հաստատությունները | 1. «Ստեփանավանի թիվ 1 մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ<br>2. «Ստեփանավանի թիվ 2 մանկապարտեզ » ՀՈԱԿ<br>3.«Ստեփանավանի թիվ 3 մանկապարտեզ » ՀՈԱԿ<br>4. «Ստեփանավանի թիվ 4 մանկապարտեզ » ՀՈԱԿ<br>5.«Ստեփանավանի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 5 մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ |
| Բժշկական կենտրոնները | 1 «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ |
| Առողջության առաջնային պահպանման կենտրոնները և ամբուլատորիաները | Համայնքում գործում է 1 պոլիկլինիկա և 3 բուժկետ՝ Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր, բնակավայրերում |
| Արտադպրոցական կազմակերպությունները, այդ թվում՝մշակույթի (արվեստի) դպրոցներ, սպորտդպրոցներ, այլ | 1- «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ,<br>1-«ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» ՀՈԱԿ,<br>1 -«ՀՀ Լոռու մարզի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ,<br>«ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, |
| Համայնքում բարձրագույն ուսումնական հաստատությունները | 1-ՆԳՆ Կրթահամալիրի Ստեփանավանի մասնաճյուղ |
| Համայնքում նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները | 1. ՆԳՆ Կրթահամալիրի քոլեջի Ստեփանավանի մասնաճյուղ,<br>2. «Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ |
| Այլ | «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ |

| **Սոցիալական պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունները, անհատները և նրանց գործունեության նկարագիրը** | |
| --- | --- |
| Համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինները և կազմակերպությունները (ՄՍԾ տարածքային կենտրոն, պետական ոչ առևտրային կազմակերպություն, այլ) և նրանց կողմից տրամադրվող | ՄՍԾ Ստեփանավանի տարածքային կենտրոն |

| | |
